

ունիմ առ իս, որ է երես՝ 384: Եւ վերջապէս աղերսեմ, զի եթէ զգիր ինչ ընկալնուս վասն իմ՝ վառողիւ առ իս հասուսցես. եւ եթէ ի Պօլսոյ մեծէ՝ պատկան մեզ գիտելոյ, ունիցիս լուեալ զնորս, ի ծանուցանել մեզ զայնս մի վերջասցիս, այսու եւն թադրութեամբ՝ եթէ կամիցի բարեհաճութիւն հայրութեան քոյ: Որ եւ լիցիս ողջ յաւետագունիւ գերապատութեամբ, հանդերձ քոյային կրօնաւորօք, ի պարձանս բոլոր ազգի մերոյ, նաեւ իմ: Որ եմ ամենանուստ ծառայ ծառայիցդ Տեառն, Սարգիս Արքեպիսկոպոս Աեսարիոյ Ապագովկեան:

Յամի Տեառն 1746 ի Մայիսի 28 ի Հռօմ

Արհին ալեծաղիկ Մօնսինեօր Վրդանէս եպիսկոպոսական սերտ սիրով ողջունէ զհայրութիւնդ ընդ քեզ եղելովք հանդերձ:

Վերջիշեալ խարդաւանաց վրայ կը խօսի յաջորդ (եօթներորդ) նամակին մէջ ալ:

Գերաւնձարեւոյ Տեառն Տեառն ՄիօիՄարայ: Արքայի, մեծառ յարգութեամբ ողջոյն ընծայեցի:

Ձառ մեզ վերակրկնեցեալ զՅիսուսաւանդ Ողջոյնդ յարգելաբար ընկալաք վերստին ուրախութեամբ: Բայց թէ ընդէր իցէր այնքան անագանեցումն պատասխանոյ նախկնոյդ ողջունագրի, ծանեար թերեւս առ Գերապայծառութիւնդ ի 28 Մայիսի գրեցելոյ գրոյս: Իսկ զյարուցելոյ շփոթութենէ ընդդէմ ինձ՝ ոչ գրելոյս փաստքն է այս: Զի նետք աղայոց էին այնք վէրք, եւ եւս այն հիւանդութիւնն ոչ էր ի մահ: Այլ եւ զլսելիքդ օրհնեցեալ՝ այսպիսեաւ անխորժելեաւ բանիւ մի դուցէ տաղտկացուցից, որպիսեաց ծածկելն՝ քան զյայտնելն բազմապատկօրէն լաւագունեղ երեւի: Եւ թէպէտ Արհւոյն Մինասայ, սակայն այն էր որքան առ այս, զի լուայ ի Մօնսինեօր Սէկրէթարէն, թէ գրեալ իցէր նմա զայսմանէ նենդական անցից, եւ զպատժոյ դէպ առ նոսա եղելոյ: Ուստի